ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ
АРМЕНИЯ

Հայաստանի քիմիական հանդես **58, №4, 2005** Химический журнал Армении

ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐ

ՍՈՒՐԵՆ ՍՄԲԱՏԻ ԿԱՐԱԽԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Այս տարի լրանում է հանրապետության ականավոր քիմիկոս-տեխնոլոգ, տեխնիկական գիտությունների դոկտոր Սուրեն Սմբատի Կարախանյանի ծննդյան 75-ամյակը: Նա ՌԴ Բնական գիտությունների ակադեմիայի Հայկական բաժանմունքի փոխպրեզիդենտն էր և երկար տարիներ ղեկավարել է Մ.Գ. Մանվելյանի անվան ՀՀ ԳԱԱ Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտը և նրա փորձնական գործարանը:

ԽՍՀՄ փլուզման տարիներին ու դրանից հետ ընկած ժամանակաշրջանում, երբ մեր ժողովուրդն ու նորաստեղծ պետությունը գտնվում էին տնտեսաքաղաքական շատ բարդ վիճակում, նա գործադրեց անսովոր եռանդ, հետևողականություն և անձնական քաջություն պահպանելու համար այն բոլոր գիտական նվաճումներն ու նյութական բարիքները, որոնք ստեղծել էր ինստիտուտի և գործարանի կոլեկտիվը երկար տարիների անձնուրաց աշխատանքով:

Լայն էր Ս.Ս. Կարախանյանի գիտական հետաքրքրությունների ոլորտը՝ անօրգանական նյութերի տեխնոլոգիա, Մանվելյանի եղանակով նեֆելինային սիենիտներից արգնահողի ստացման տեխնոլոգիական հարցերի լուծում, ֆտորային թափոնների կոմպլեքս մշակում, ցեմենտի գործարանի թափոնային փոշուց շինարարական իրերի ստացում, Հայաստանում ապակու արդյունաբերությունը տեղական հումքով ապահովելու հարցերը և այլն: Իր կյանքի վերջին շրջանում նա աշխատում էր ոսկի պարունակող արտադրական թափոնների կոմպլեքսային վերամշակման և թանկարժեք այլ մետաղների լրիվ դուրս կորզման սկզբունքային նոր սխեմայի մշակման ուղղությամբ:

1982-95թ.թ. նա վարել է անօրգանական նյութերի տեխնոլոգիա առարկայի դասընթացները Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, եղել է շատ պետական և հասարարական կազմակերպությունների Գիտական խորհուրդների անդամ, պարգևատրվել է կառավարական պարգևներով և մրցանակներով:

Ս.Ս. Կարախանյանը վառ անհատականություն էր, ստեղծագործական նախաձեռնությամբ օժտված գիտնական և գիտության կազմակերպիչ, սկզբունքային և ազնիվ ընկեր: